

ԱՅԼԵՒԹԵՐ

ՔՆՆԱԴԱՏՆԵՐՈՒՍ

(Շար. տես Բազմ. 1928 էջ 181)

Սյունի հետ կը շարունակենք չհասկնալ գիրար: Ես կը քննեմ մատենագրութիւնը, որոյ հետ կապուած են մեր աւանդութիւնը, և անոնք կը դատեմ վերջինները. նա կը բաժնէ աւանդութիւնները մատենագրութեանէն, — որոյ տկարութիւնը կը ճանաչէ, — վերացական գոյութիւն մը կու տայ աւանդութեանց, և կը դասէ այն գերբնական ճշմարտութեանց կարգը, որոց պէտք է հասնալ՝ առանց քննելու: Կը միաբանիմ իւր հետ՝ բաժնելու մատենագրութեանն աւանդութիւնները, և ցոյց կու տամ ասոնց հակասութիւններն ինքնին, և Սյուն կը զգուշանայ տեսնել զանոնք: Քանգրամներ կը նկատէ հոն՝ ուր ես կ'ուզեմ ու կը շինեմ. և ամէն բան կ'ուզէ իրեն ընտանի գոյներով ներկուած տեսնել: Կը փաստեմ ու կը խախտեմ իւր տուած—կամ լաւ ես՝ ալոյց տուած և իւր կրկնած—ապացոյցները, և նա լուծեալմը կը պատասխանէ, և նոր առարկութիւններ կը աղբիւն հերքածներս վերստին դիմաց կը դնէ իւր նոր բաներ: Ղրութիւն մը՝ որ կը ծառայէ վիճելու, յաւիտեան վիճելու, բայց ոչ լուծելու հարցերը: Մեր աւանդութիւնը «քննադատութեան փորձերուն չեն զմանաւ»։ ուրեմն անվիճելի ճշմարտութիւններ են անոնք: Եւ եթէ Թաղէոս ու Բարձրագոյն յայտնուին Սյունի և բնեն, մեք Հայաստանը չենք տեսած բնաւ, նա պիտի պատասխանէ: Մոռցած էք անկասկած, զի «աւանդութիւնը չի շինուիր»։

Ուսկից յառաջ կու գայ այս մտային վիճակը: Պարզ է: Սյուն, որքան թոյլ կու տայ մեզ հասկնալ, Հայ եկեղեցւոյ գոյութիւնը կը հիմնէ՝ ոչ թէ Աւետարանին վրայ, ինչպէս պատշաճ է քրիստոնէական եկեղեցւոյ մը, — առանց որոյ եկեղեցի կոչուեալ իսկ անիմաստ կը դառնայ, — այլ տառն զորքեանց վրայ, որոց կու տայ կենաց և մահու կարեւորութիւն մը, և որոնք քննու-

թեան չհանդուրժելով հանդերձ՝ պէտք է անխախտ մնան: Հարկ չկայ որ բռնմ՝ թէ այս զրութիւնն ինչ տեսակ արդիւնք կըրնայ ընծայել Հայ եկեղեցւոյ, և ուր կը տանի զայն:

Մեծ է խորհելու և դատելու զանազանութիւնը՝ որ կայ Սյունի և իմ միջև: Նա իւր պատմաառարանութեանց մէջ կը ցուցնէ՝ թէ սնած է Ազգայնաստումով, և անկից առած դասերը կը կրկնէ հաւատարմօրէն, իսկ ինձ համար՝ Օրմանեանի բանասիրութիւնը կը ծառայէ՝ մեր անցելոյն ծանօթութեան հետեցնելու, ոչ թէ մօտեցնելու, ինչպէս ճատ առիթներ ունեցայ փաստերով ցոյց տալու: Ինչ որ էկեղեցւոյ մէջ աւետարան չէ, պատմական ու բանասիրական նիւթեր կը համարիմ ես, և ըստ այնմ կը վարուիմ անոնց հետ, մինչ Սյուն կը նայի անոնց իրրեւ անհպելի սրբութեանց: Մեր դատողութիւնը հիմնովին կը հեռանան իւրարմէ, ահա թէ ինչո՞ւ կ'երկարին մեր վիճարանութիւնը, և որոշ եզրակացութեան մը չեն կրնար յանդիւ: Այս անգամ Երուսաղեմի հանդէսը կու տայ մեզ հետեւալ փաստերն ի նպաստ առաքելական քարոզութեան, որոց կարեւոր է որ անդադառնամ:

1. Իւր զլխաւոր աղբիւրն Աւետարանը չունչն է Նիմայ, Հայաստան, կ'ըսէ, «մասնաւոր շահեկանութիւն պիտի ունենար» առաքելոց համար, որոնք ս. Գրքէն տեղեակ էին «նոյեան տապանին հանգչելուն անոր մէկ լերան վրայ», և զանոնք իրեն պիտի ձգէր (Մարտ, 75): — Չեմ բերէ՝ թէ «տրամաբանական» չէ այս տեսութիւնը: Բայց նոյնչափ տրամաբանական է նաև խորհիլ՝ թէ Յիսուս, որ իւր արարչագործ ձեռքերով կերտած էր մեր այդ սրբազան լեռը, մասնաւոր հոգածութեամբ մ'անոր ուղղած ձեռնահապետի տապանին ցուկը, և երկրորդ խանձարուրդ ըրած զՀայաստան մարդկութեան, պատշաճ է՝ որ Պաղեստինի մէջ քարոզելէն յառաջ ինքն իսկ տարած լինի իւր աւետարանն այդ նախասիրած աշխարհին: Եւ այս զաղապարն աւելի շողմուխ է մեզ՝ քան առաքելական քարոզութիւնը:

Քրիստոս, կը յարէ Սիոն, «ազգու պատուէր մը» տուաւ առաքելոց՝ երթալ «աշակերտել զամենայն հեթանոսս»։ Կարելի՞ բան էր՝ որ անոնք «բոլոր ազգերէն» դուրս թողուին հայ ժողովուրդը։ — Եթէ անոնք յաջողեցան այդ «ազգու պատուէրին» շնորհիւ՝ բոլոր ազգերը միանգամայն դարձնելու գերմարդկային հրաշքը գործել, պէտք է ընդունինք՝ թէ մեր ազգն ալ դարձուցինք. և հետեցեանք՝ թէ այն ժողովուրդները, որոնք ըստ պատմութեան առաքեալներէն դարեւ վերջ քրիստոնեայ եղան ու դեռ կը լինին, նախ ընդունենք են աւետարանը, և յետոյ վերստին հեթանոսացեալ յայնչեալ՝ թէ Քրիստոսափոր Կոլոմբոսէն յառաջ՝ Գալիլիոյ ձկնորսաց նաեւը կտրեւ անքննելի լիարանգիւնութեամբ, ի գնաւ այն կողմի ժողովրդոց՝ որոնք «ամենայն հեթանոսաց» մէջ էին։

«Եթէ ստոյգ է», կը շարունակէ Սիոն, թէ առաքեալը Պաղեստինէն անցան սահմանակից Ասորեաց ու Միջագետաց կողմերը, և քարոզելով յառաջ գնացին «դէպի արեւելք (Պարսկաստան են), անոնք չէին կրնար Հայաստանի վրայէն ոտսում ընել» և հոն ալ չքարոզել։ — Սիոնի դիւրութեամբ «ստոյգ» համարելով այդ առաքելական արշաւանքը, պէտք կը լինի նաև հետեցեակ՝ թէ Հայաստան, որ ներկայապէս յիշեալ աշխարհներէն վեր դէպ ի հիւսիս կը գտնուի, առաջին դարուն անոնց մէջ տեղ դիրք բռնած էր. որով առաքեալը չէին կարող անոր վրայէն «ոտսում ընել»։ մանաւանդ որ անոնց օրով դեռ սաւառնակներ ալ չկային։

Անոնք բոլորը համեղ պատմութիւններ են անկասկած, կամ «անբնականաբան» ապացոյցներ», ինչպէս որ ուզուի։ Բայց յարմար պատմելու և լսուելու ձեւով նային եղանակի մը մէջ, կուշտ փորով բուրբուրած տաքուկ վառարանի մը շուրջ. և ոչ թէ պարզելիք բանասիրական հրապարակի վրայ, ի տես հայագէտ Էրոպիոյ, որ կը հասկանայ մեր լեզուն, բայց ոչ և այս հայկական պատճառարանութիւնը որ անոր ականջին խորթ կը հնչէ։

Սիոն կը ծանրանայ նաև Սանատրուկյան ձին վրայ (Յունիս, 168), որոյ մասին արդէն ընդարձակօրէն խօսեցայ սոյն յօդուածիս առաջին մասին մէջ, և աւելորդ կը համարիմ անդրադառնալ հոս։ Միայն զարմանք պիտի յայտնեմ՝ որ ինձ կը վերագրուի «Սանատրուկյան տնով անգոյ թագաւոր մը ստեղծուած» լինելու կարծիքը. ուսկից անգամ մ'ալ կը ստիպուիմ հետեցեակ՝ թէ Սիոն իմ գրութիւնս չէ կարդացած, կամ թռչելով անցած է անոր վրայէն։ Զի ես ընդ հակառակն հաստատած եմ Սանատրուկյ գոյութիւնը, զինով զայն թ դարու կիսէն վերջ. և այս իսկ է՝ որ կը հիքքէ անոր դահճութիւնը թաղէոսի և իւր դատելու Զուրէ յիշեցեակ ինձ՝ նոյն արքայի որդւոյն Վաղարշի թագաւորութեան թուականին մարկուարտեան տեսութեան (116ին) կրկնութիւնը Հ. Աստուրեանէ, նոյնպէս հերքուած ինձմէ։ Անհիմն է՝ Լաբուրնայի հայ թարգմանչին շեղումներուն մէջ մեր աւանդութեան աղեղնութեան նըշմարտուր Կարբեի կողմէն. որ ես փաստած եմ աշխատութեանս մէջ՝ (32) թէ անոնք Պարսից եկեղեցւոյն աւանդութեան պտուղն են։

«Եթէ կեղծիք է, կը յարէ Սիոն, շինծու է թաղէոս առաքեալ, Սանատրուկ, ինչո՞ւ համար տարբեր անուններ պիտի չստեղծէին», այլ զասոնք միայն։ Որովհետև կեղծիքը ստեղծելու համար Թիշը այդ անունները պէտք էին. այսինքն հնարողը հարկ էր առնուլ մատնիչ տարբեր. արգարեան զրուցին կեղծ թաղէոսը, զոր ինք իրական կը կարծէր, զօդել թ դարու Սանատրուկյ հետ, զոր ինք Ա դարու կը համարէր։ Եւ արդէն արդոց փոխան եթէ ուրիշ անուններ ալ զնէր, դարձեալ զգալի պիտի ընէր կեղծիքը։ Այս կը հետևի այդ անուններէն, և ոչ թէ «ասոնք պատմական անձեր են» ըստ Սիոնի, որ միանգամայն կը վրդովի՝ որ ես իւր այդ «զօրաւոր առաքելութիւնը չլսելու կը զարնեմ»։ մինչ ես կը լսեմ ու տարօրինակ կը գտնեմ Այն է «չլսելու զարնել», երբ Ազաթանգեղոս, Փաւստոս, Եղիշէ, Սամուէլ, Լաբուրնայի թարգմանչին

ու փարպեցիին միարան կը հաստատեն՝ (գործս, 23-35) Թէ Դ-Ե դարերուն Թաղէական աւանդութիւնը դեռ անծանօթ էր Հայոց, որով յետոյ է ստեղծուելը Վկայաբանութեան ազդեցութեամբ, որ ինքն իսկ ստեղծական աղբիւրէ մը բղխած կը ցուցնէ ինք զինքը, և Սիոն կը շարունակէ իւր յաւիտենական յանկերգը՝ Թէ «Աստուծոյ յիշխանութիւնը»:

Առ այս կ'ապաւինի (Մարտ, 74) Գեղեցիկի անգոր տեսութեան՝ Թէ «Առանց տարակուսի է՝ որ Թաղէի զրոյցն ի Հայս շատ աւելի հին է՝ քան Թէ այս գրաւոր աւանդութիւնը (Վկայաբանութիւնը) Արդէն Բիւզանդ կը յիշէ Թաղէի քարոզութիւնն և առաքելապան Սանատրուկը»: Ես ցուցի՝ (3-5) Թէ Փաւստոս ոչ աւանդութենէ, այլ նոյն վկայաբանութենէն առած էր Թաղէի քարոզութեան ծանօթութիւնը. և մեր դասական հեղինակաց ծայնն աւանդութեան հակառակ աւելի համոզիչ է՝ քան գերմանացի բանասիրիդ ձրի կարծիքը: Այսպէս նաև Թանգարանի յատուկ է Մ. Գարազաշեանի համոզումն ի նպաստ հայ աւանդութեան աղբիւր արգարեան զրուցին, երբ արդի եւրոպական ամբողջ բանասիրութիւնը, որ անոր հերքման մէջ ոչ մի շահ չունի, պատմութեան էջին դուրս հանած է զայն ժամանակը կը հինցնէ «խիզախ և անաչառ քննադատից» տեսութիւններն ալ, երբ հաստատուն հիմքու վրայ չեն կառուցուած: Եւ անոնք հին կը մնան Սիոնի անոնց պիւրկ փարելոյն հանդերձ:

2. Անցնելով նախազրիգորեան քրիստոնէութեան հարցին, Մարտիմիանոսի պատեռագմէն ու Տրդատայ վերագրուած հալածանքէն՝ Գարազաշեանի յօդուտ անոր հանած հետեւութիւնը, զոր յառաջ կը բերէ Սիոն (Մարտ, 73), արդէն հերքուած է ուրիշներէ և ինձմէ (151, 161): Կը յիշէ նաև Փիլիմիլիանոսի վկայութիւնը՝ Տրդատայ հօր Խոսրովու հալածանաց մասին, զոր աներ է Խորենացին՝ զուրկ անծանց ու տեղեաց անուններէ. և զոր Գարազաշեան ժխտած, և «Գաթրճեան վաւերական կ'ընդունի», կ'ըսէ Սիոն: Ուր ընդ հակառակն

Միլիթարեան քննադատող դիտել կու տայ, և ես կոչած եմ իւր խօսքերը (151), Փիլիմիլիանոսի պատմածներուն ժամանակագրական անմիաբանութիւնն իւր մահուան թուականին հետ. այսինքն Թէ Խորենացիին զործ ունէր կնիզ գրութեան մը հետ, զոր ինքն իսկ «ոչ ինչ կարեւոր համարեցար, կ'ըսէ, երկորորդի»: և զոր Սիոն՝ առանց տեսած լինելու՝ «շատ նշանակալից» կը զտնէ, փոխանակ տեղեւոյն կոչելու:

Ուր փաստեր կը պակսին, Սիոն իւր բաղձանքներն իբր փաստ կը քննէ: Այսպէս կ'ախորժի կարծիք՝ Թէ ինչպէս Կոստանդիանոս հռոմէական կայսերութեան մէջ, նոյնպէս Տրդատ ի Հայս քրիստոնէութիւնն «առաքելական քարոզութեամբ մոտ գտած», — կ'երկի՝ մոռնելու ուրիշ կերպ չկար, — և բաւական ալ տարածուած» զտնելով, ստիպուեցաւ խոնարհիլ աւետարանին առջև: Եթէ երևակայութիւնն ապացուցի ոյծ ու նենար, ինչքն կրնայի ըսել ես ու զմայլեցնել զՍիոն: Բայց նա մոռնալու չէ՝ Թէ Լուսսաւորչի «հրաշապատում գործունէութիւնը դրական պատմութեան վերածելէ» վերջ ալ՝ անշարժ կը մնայ նոյնքան դրական կէտ մը, հաստատուած Ազաթանգեղոսէ և Փաւստոսէ միանգամայն, — որոց վկայութիւնները կոչած եմ (158-60), — Թէ Տրդատ չէր խոնարհողը Հայոց քրիստոնէութեան առջև, այլ Հայք խոնարհեցան Գրիգորի և Տրդատայ սուսերագէն քրիստոնէութեան առջև, և շատեր ալ այնուհետև դեռ զաղտնապէս հեթանոս մնացին:

Հաստատուելու համար՝ Թէ Տերտուղիանոսի քրիստոնէաներ պահող «Հայաստանը» մեծն էր, Սիոն կը կրկնէ (Ապրիլ, 108) Օրմանեանի խօսքը (Ազգ. 61) Թէ «Հին մատենագիրներ Հայք (այսինքն Արմենիա = Հայաստան) ըսելով՝ կը հասկնան ընդհանրապէս Մեծ Հայքը, և անվիճելի փաստեր կան առ այդ», ինչպէս Եսայիայ վկայութիւնը Սենեքերիմայ որդուց «Ի Հայաստան» փարսեան մասին: Բայց մէկ ծիծառը գիտուն չի բերեր, և հիմնովին սխալ է այդ նշանակութեան ընդհանրացումը: Արտաքին մատենագիրը Հայաստան կոչու-

մը կու տային Եփրատի երկու կողմերուն միանգամայն, զանոնք իբարմէ գտաւելու պարագային յարելով Մեծ կամ Փոքր մակղիբն ալ։ Այսպէս Սորաբոն, որ կը զրէր Ա դարուն, ուստի — եթէ Սիոն ներք — «հին յատենագիր» մ'է, կ'ըսէ՝ Թէ Եփրատ «հոսի ընդ արևմուտս Հայաստանի» որ Մեծն կրչի, մինչև ցփորքն, ունելով զսա ընդ աջ — մէջ (Այս. ԺԱ, ԺԲ, 3), ինքն չէ Մեծ կամ Փոքր կոչողը, այլ «կոչի» կ'ըսէ. այսինքն այդ դարուն և անշուշտ աւելի կանուխէն ալ հասարակաց տուած սահմանն էր, զոր ուրիշ շատեր ևս կը գործածեն իրենց զրուածոց մէջ, ինչպէս Գիոն կաստիս, Ապպիա — նոս և այլք։ Եթէ. Հայաստանն առանձին՝ արևելեանը նշանակէր միշտ, անոր վրայ Մեծը չպիտի դնէին։

Կան նաև գրիչներ, և մերթ յոյներն իսկ, որ սոսկ Հայաստանով կ'որակեն անխտիր զետին երկու կողմերն ալ. այդ, նաև փոքր Հայքը, Այսպէս Գիոն, որ կը զրէր Պ դարուն, Տերտուղիանոսն ոչ հեռի, կ'ըսէ՝ Թէ կեսար յաղթելով Պոմպէոսի, «զմասն մի Հայաստանի, որ էր ընդ իշխանութեամբ Դիոտարի, ետ Արիորարզանի արքային կապաղովկիոյ»։ Եթէ «զմասնայն Հայաստան» որ եղև ընդ իշխանութեամբ Փառնա — կիսի՝ զրաւելով, զմասն մի Դիոտարի և զմի մասն Արիորարզանի շնորհաց» (ԽԱ, 63), ուր Դիոնի համարուգանի տպագրին (1750) հրատարակչը և Մարկուարտ (Հոգե. ամս. 1906, 34) կ'իմանան փոքր Հայքը, ինչ որ կապաղովկիոյ զրացութեանն ալ յայտնի է արդէն։ Նոյնպէս կ'իմանար տակաւին և Պրոկոպիոս՝ Զ դարուն, երբ կը զրէր՝ Թէ «զպարիսպա Սեբաստիոյ և Նիկոպոլի քաղաքացն Եդեսիոսի» կը նորոգէ Յուստինիանոս։ Եւ կամ «էր տեղի մի ի Հայաստան, ոչ հեռի Եփրատայ, ուր էր հաստատեալ կայան զօրաց Հռոմայեցւոց. տեղին էր Մելիտինէ, և կայանն անդ ուր Լեգէոնն կոչի»։ Եւ կամ «զայսոսիկ գործն կատարեաց ի Հայաստան» որ կայ յաշկողովման արիւնս Եփրատայ» (Զ. ին. Գ)։ Ասոնք են «անվիճելի փաստերը», ոչ Թէ Սիոնի յիշած ու չցուցածները, որոնք

ահա կը հերքուին, Հետեաբար Տերտու — դիանոսի «Հայաստանը» չէ կարելի կապել վճռաբար մեծին հետ. այլ կրնայ փոքրն ալ իմացուի, և աւելի յարմարօրէն փոքրը, ինչպէս պիտի տեսնենք յետոյ։

3. Մեր այս փաստերը կը խախտեն նաև սիոնեան իմաստն Եւսեբիոսի այն Հայաստանին՝ յորում նա Մերուժան եպիսկոպոսը կը դնէ, Ընդարձակօրէն յառաջ կը բերէ Սիոն (Ապրիլ, 109) Գեղզերի տեսութիւնը, որ հաստատուած է լոկ Մերուժան անուան վրայ, որպէս Թէ փոքր Հայոց եպիսկոպոսունք յունահայոցն և աստուածաշնչական անուններ միայն կը կրէին. որով Մերուժան որոնելի էր արևելակողմը։ Դիւշէն օրինակներով հերքեց անուան տեսակէտը, և Դեկոսի հալածանաց մասին սուր դիտողութեամբ մը պատշաճագոյն ցոյց տուաւ զՄերուժան փնդով փոքր Հայոց մէջ։ Բայց եթէ լսենք Սիոնի, Դիւշէն խօսեր է «առանց պատման հիմքի», և այսքան. ուսկից յայտնի է՝ Թէ Սիոն չէ տեսած ոչ զայն և ոչ անոր ամփոփումն իմ գործիս մէջ (115 — 17)։ Բանասիրութեան մէջ անսովոր է անշուշտ հեղինակի մը մասին դատաստան ու վճիռ կազմել առանց տեսնելու. «ի բացակայութեան դատապարտուածի» պէս բան մը։ Բայց Երեսարանի հանդէսը խորհեր է Թէ նպատակը բարի է, ամբողջով հայ աւանդութիւնը. ուրեմն միջոցն ալ բարի է։ Կոնիքրին ալ, կ'ըսէ, կարծեկից էր Գեղզերի։ Սակայն գիտենք՝ որ անգլիացի հալագէտը մեր անցելոյն նկատմամբ յաճախ տեսութիւններ կը կազմէր սիոնեան դիւրութեամբ։ Ելաւ օր մը պնդեց՝ Թէ Հայերս լի Գ դարէն յառաջ եպիսկոպոսական ձեռնարկութիւն չենք ունեցած։ Եւ երբ բազմաթիւ փաստերով հերքեցի զինքը, ինք իւր վրայ զարմացաւ։

Մերուժան, կը խորհրդածէ Սիոն, յիշուած իբր Հայաստանի միակ եպիսկոպոս, ընդհանրական զիւրոյ հանգամանքն ունի։ Ուստի մեծ Հայոց մէջ կար «կազմակերպեալ եկեղեցի, որուն նուիրապետութեան գլուխը կը գտնուէ Մեհրուժան եպիսկոպոս մը»։ որով «կաթողիկոս» էր նա։ Վասն զի

եթէ «պարզ եպիսկոպոս մը» լինէր Եփրատէն անդին, Դիոնիսիոս «փոքր Հայքի ուրիշ եպիսկոպոսներուն ալ պէտք էր գրել»։ Բայց եթէ նախագրիգորեան հայ շնուիրապետութեան» կամ «եպիսկոպոսներուն» երազոտ գաղափարը մէկ կողմ դրուի, պիտի տեսնենք՝ որ ՉԱԳին հռովմէական պետութեան» որով և փոքր Հայոց մէջ՝ տակաւին գերիշխան է հեթանոսութիւնը, որ կը բըռնանայ ու կը հալածէ իւր հակառակորդ նոր կրօնը. և յետ կոստանդիանոսի ևս դեռ պիտի ապրի բաւական զօրաւոր կերպով։ Հետեւաբար Դեկոսի հալածանաց ժամանակ դեռ հազիւ փոքր հայ հօտ ալ կրնար գտնուիլ հռովմէական Հայաստանի մէջ, յանձնուած միակ եպիսկոպոսի մը, որուն կը գրէր Աղեքսանդրիոյ հայրապետը Այդ հօտը յոյն քարոզչաց պտուղն էր, յայտնի չէ որ ժամանակէն սկսեալ։

Ամենապ. Գուրեան Սրբազանն ևս իւր տեսութիւնն է յայտնելու ինդրոյս շուրջ, զոր Սիոն յառաջ բերաւ։ Հոն կը դիտուի՝ թէ «Մեհրուստանը Մեծ Հայքի եպիսկոպոս էր, և ոչ փոքր Հայքի, ուր Գ դարուն կարելի չէ զուտ հայ բնակչութեան կեդրոններ գտնորոշել, և ոչ յոյն եպիսկոպոսական աթոռներու միջև ազգայնորէն ուրոյն աթոռի մը գոյութիւնը ենթադրել»։ Բայց պատմութիւնը կարելի կը ցուցնէ այդ երկու անկարելիները։ Լուսաւորիչ կենսարիայէն «ի քաղաքն սերաստացուց» հասնելով, հոն «գտանէր ըստմութիւն եղբարց», որոցմէ «քաղուժ գունդս գունդս յաճախեալ առնոյր ընդ իւր», որպէս զի նորադարմ Մեծ Հայաստանի մէջ «վիճակեցուցէ զնոսա ի քահանայութիւն» (Ազաթ. 605)։ Ազոնք Յոյնքը չէին, որոց լեզուն անիմանալի պիտի մնար մեր ժողովրդեան, այլ Հայեր. անոր համար փոքր Հայաստանէն կ'առնուին, ոչ կենսարիային, որ աւելի ծանօթ վայր մ'էր Լուսաւորչին։ Այն ուրեմն «հայ բնակչութեան կեդրոն» մ'էր Սիբաստիա, հոգ չէ՞ զճառ թէ խառն։ Այդ շրջանին՝ քահանայից պէս նաև եպիսկոպոսաց իրենց հօտին հետ «ազգայնորէն» յարմարութեան փոյթ կը տարուի։ Ապացոյց՝ ս. Բարսղի

վարմունը, որ հակառակեցաւ Տերենտի առաջարկութեան՝ արեւելեան Հայոց թափուր աթոռներուն յոյն եպիսկոպոսներ տալու, պատշաճագոյն համարելով կարգել անոնց առաջնորդներ «հմուտը լեզուին, և որ այլոց ևս սովորութեանց իւրեանց ազգին տեղեակ իցնն», ինչպէս երկարօրէն կոչած եմ (գործս, 203)։ Ուրեմն փոքր Հայք ալ կրնային իրենց տոհմակից հովիւ մ'առնենալ։

«Եթէ Մեհրուստան, կը յարէ Սրբազանը, փոքր Հայքի մէկ անկիւնը դրած ըլլար իր աթոռը, ինչ հանգամանքով կրնար Հոյաստանի հաւատացուիներուն եպիսկոպոս նկատուիլ ուրիշներէ»։ Աս պատճառով, որ այդ աթոռն ուր ալ գտնուէր, անկիւնէ մ'աւելի տեղ չէր կրնար գրաւել. և փոքր Հայքն ալ հաւասարապէս Հոյաստան կը նկատուէր ու կը կոչուէր՝ Ըսինք՝ ուրիշներէ. և զոր Եւսերիոս, իւր գրութեան մէջ անկարելւ լով հանգեցած արեւելեան Հոյաստանի կամ Հայոց, չէր կրնար անգիտանալ. ոչ ալ աւնոր զատ անուն մ'է տուեր, որպէս զի ըզ՝ Մեհրուստան հարկադրէինք հակառակ կողմը նկատել։

«Ինչ պէտք կար, կը շարունակէ Սրբազանը, որ Մեհրուստան իրեն այնքան մօտիկ գտնուող աթոռները անտեսելով, մինչև Աղեքսանդրիա դիմէր՝ ապաշխարութեան հրահանգ մը ինդրելու համար»։ Բայց աւրեւելակողմը նստելով, շատ աւելի հեռի պիտի գտնուէր Աղեքսանդրիայէն, և միշտ աւելի մօտ միւս աթոռներուն։ Յետոյ՝ Եւսերիոս չի ըսեր՝ թէ նա ինդրեց հրահանգը. այլ Դիոնիսիոս, որ Քրիստոսի համար չարչարուեր, և աղով, կ'ըսէ, «մեծ համբաւ հանած» էր Եկեղեցւոյ մէջ, բարի նախանձով մը կը գրէր իւր կողմէն, ապաշխարութեան կանոններ տալով հաւատոց մէջ տրակարացելոց, ինչպէս Եգիպտացոց, Հայոց, Լաւդիկեցոց և մինչև հեռագոյն Հռովմաս. յեցուց։ Եթէ պէտք լինէր «խնդրել», հայ առաջնորդին դիմելու տեղն էր կենսարիա, որոյ հետ զՀայա՝ երկուստեք Եփրատայ՝ նուիրապետօրէն կապուած ցոյց տուաւ մեզ պատմութեան տիրական ձայնը, ի հենուկ

աւելորդ աղմուկներու (հմտ. գործ, 182-220 հն), Որով Դիւշէն իրաւունք կը ստանայ իւր տեսութեան մէջ:

Գործնական լինինք, Տերտուղիանոսի ու Եւսեբիոսի Հայաստանն արեւելեանը լինելուն ոչ մէկ ապացոյց չկայ. և անկից հաշուած հետեւութիւնը ի նպաստ մեծին՝ սոսկ ենթադրութիւնը են: Իսկ աղոնց դէմ ունինք, եւրոպացի լաւագոյն դատողաց հետ, մեր քրիստոնէութեան հնագոյն պատմիչը, Դ. դարուն զրուած և Եփն սկիզբները հայացած. որ կը հաստատէ՝ թէ մեր ազգովին դարձի պահուն ա. Գրիգոր չգրուած մեծ Հայոց մէջ ոչ հօտ, ոչ հովիւ. այս պատճառաւ՝ եպիսկոպոսականին հետ իւր քահանայական ձեռնադրութիւնն ալ կհասարիոյ մէջ բնորոշնեցաւ. Հայոց առաջին քահանայացուները Սերաստիայէն բերաւ, և եպիսկոպոսները՝ քրմաց զաւակներէն պատրաստեց (Ազաթ. 604, 629): Ո՛ր գնացեր էր իբր կէս դար յառաջ ապրող «կազմակերպեալ եկեղեցին» իւր նուիրապետութեան զլիով՝ ու «եպիսկոպոսներով»: Պիտի ըսնք՝ թէ կամ Խոսրովու վերագրուած անորոշ հալածանքը ընալինջ՝ բրաւ այդ մեծ կազմակերպութիւնը, և կամ բաղձացուած «եկեղեցին» գոյութիւն չէ ունեցած բնաւ: Առաջինը չի համոզեր զմեզ, երբ կը խորհինք՝ թէ ծանրագոյն և երկարատեւ փոթորիկներ, որ պայթեցան Եկեղեցւոյ վրայ ուրիշ աշխարհաց մէջ, ոչ միայն չյաջողեցան ջնջել զայն նոյն կողմերէն, այլ աւելի ուռնացոյցին, ծնունդ տալով Տերտուղիանոսի առածին, «արևն մարտիրոսաց սերմն քրիստոնէից». և հռովմէական կայսերութիւնն ինքնին խոնարհեցաւ իւր հալածած աւետարանին առջև. Եւսն ինքն մեզ գրացի Պարսից եկեղեցին՝ Շապուհ կատաղի հարուածներէն վերջ դեռ կ'ապրէր, և մեր Գիւտ կաթողիկոսն անոր եպիսկոպոսներ ու երէցներ ձեռնադրեց (Փարս. 352): Արդ ինչպէս կրնար մեր «կազմակերպեալ եկեղեցին» Խոսրովէն մինչև իւր որդին Տրդատ ճայրապիւր ու չքանալ, Անկարէի էր այդ: Եւ մեզ կը մնայ ընդունիլ երկրորդ հետեւութիւնը՝ թէ կարծեցեալ «եկեղեցին» գոյու-

թիւն չէ ունեցած մեծ Հայաստանի մէջ, եթէ նոյն իսկ ցանցառ քրիստոնեաներ եղած լինին. և Տերտուղիանոսի ու Եւսեբիոս քրիստոնեայ Հայութիւնը պէտք է որոնենք փոքրին մէջ:

4. Պետրոսի առաքելութեան հարցը, անտեղի կերպով խառնուած Սիոնէ մեր պատմական խնդրոց մէջ, կը շարունակուի և այս անգամ, բայց փոխուած ձևով մը (Յուլիս, 194): Սիոն՝ որ հիացող մ'է բողոքականութեան, յօժարութեամբ ձեռք առաւ անոր բոլոր կողմից փաստերը, ցոյցնելու համար՝ թէ Պետրոսի ի Հռոմ երթը պատմական չէ, այսինքն իրապէս գնացած չէ հոն: Կ'երևի թէ ինքն ալ զգաց վերջապէս իւր փաստերուն ապիկարութիւնը. և այս անգամ «պատմական քրնադատութեան» անհամաձայն կը գտնէ անոր «Հռոմի եկեղեցւոյն հիմնադիր» լինելը միայն: Եւ իրեն դեռ նոր յայտնուած «պատմական տուիքներու պնդելուն» շնորհիւ կ'ընդունի՝ թէ նա «Պօղոսէն ետքը զհաց Հռոմ»: Ուրեմն կը դատապարտէ ու կը հրաժարի—լռելիայն—իւր և մեր ազգայնոց շատերուն թիքնորէն ընդգրկած կասկածէն Պետրոսի երթին մասին: Եւ ես գտն եմ՝ որ ապարդիւն չանցաւ իւր յարուցած այդ վէճը գէթ իրեն համար, եթէ ակնկալուած օժանդակութիւնը չտուաւ մեր թաղեական աւանդութեան:

Կաթողիկեայ պատմաքննութեան մէջ կրկին է Պետրոսի առաքելութեան հարցը, ա. ի Հռոմ գնացած է նա. — բ. ինքն թէ ուրիշներ եղած են առաջին քարոզիչ: Առաջին կէտն ամէն կասկածէ վեր է, ինչպէս տեսանք: Իսկ երկրորդի մասին բաւեալնք որոշ տեսութիւն մը չունին, և սովորաբար վերապահութեամբ կը խօսին: Վիզուրու կ'ըսէ. «Մեք չենք գիտեր՝ ո՞վ է երբ աւետարանն առաջին անգամ տալու տիեզերական ուստանը: Հաւանօրէն հանդիպած է հոգեգալստեանն քիչ վերջ, հոռմայեցի Հրէից մէկէն որ այն ժամանակ Երուսաղէմ կը գտնուէին» (Dict. V. 1181): Իր յիշէ Պետրոսի երթին եւսեբեան թուականը, և կ'ըսէ. «Ս. Պետրոսի ի Հռոմ

առաջին ուղեւորութեան թուականը հաւանօրէն անստոյգ պիտի մնայ միշտ» (373)։ Սոյն տեսութիւնս կը կրկնէ նաեւ Դիւլշէն՝ Սիոնի կոչած կտորին մէջ, «ոչ շատ իրմեաւոր» գտնելով այն հաշիւները՝ որ զՊետրոս 42 կամ 39 թուականէն ի Հոռոմ կը փոխադրեն, և զազանիքը տարածուած տեսնելով անոր քրիստոնէութեան «առաջին ծագման վրայ»։ Սիոն աւելորդ համարեր է շարունակել իւր ընթերցումը, ուր զօրուած պիտի գտնէր և զայս. «դէպ այն ժամանակ, ուր ս. Պօղոս կը վերստանար իւր ազատութիւնը, ս. Պետրոս կ'երթար ի Հոռոմ։ Գոյցէ սորդեն յառաջագոյն ալ գնացած էր հոն, ինչ որ հետադարձ է, բայց ոչ խստիւ ապացուցանելի»։ Եւ կը յարէ առնոր Ս. Պօղոթին Բարբրոն = Հոռոմ, և Ա. Բարբրոս վկայիչ անուանելը, որոց խօսքերն ալ կոչեցի ես Սիոնի՝ նախորդ յօդուածներու մէջ։ Այսպէս այս «պատմագիտ եկեղեցականը», զոր վերև «առանց պատմական հիմքի» խօսող մ'ըրաւ նոյն Սիոնը, կը հերքէ Սիոնի յեղիցիւած կասկածը Պետրոսի ի Հոռոմ երթի մասին, իսկ ես վերջին յօդուածիս մէջ, որուն այս անգամ կը պատասխանէ Սիոն, կը գրէի այսպէս. «Որո՞նք ալ լինէին Հոռոմայ առաջին ցարդիչները, երբ եկեղեցին ուռնանալով՝ վիճակներու բաժնուեցաւ, և իւր վէճն օր մը գնաց հաստատուեցաւ ի Հոռոմ, հովուցե ու նահատակուեցաւ հոն, և անոր յաջորդները շարունակեցին հոն նստիլ, կայսերական ոստանը Պետրոսի աթոռն եղաւ բնականօրէն» (Բազմ, 28)։

Ով որ վիզուրօսի, Դիւլշէնի և իմ այս տեսութիւնները համեմատել իրարու հետ, և քիչ մը դատողութիւն ունենայ, կը կարծեմ՝ թէ որ և է տարբերութիւն չպիտի գտնէ անոնց մէջ։ Սիոն ընդ հակառակն իմ դէմ կը ճակատեցնէ զԴիւլշէն, «ապացուցանելու համար՝ թէ առեղծօրէն է Պետրոս առաքեալին Հոռոմի եկեղեցւոյն հիմնադիր ըլլալը և ոչ թէ պատմութիւն հակառակ Հ. Վ. Հաջորդի համոզմունքուն»։ Բայց որ կէտով կը հակառակի ինձ արդեօք Դիւլշէն. Հոռոմայ քրիստոնէութեան անդաւա

նիկ ցարդաց առատութեան մասամբ, թէ Պետրոսի ի Հոռոմ երթալուն հաստատուելուն, ազով իսկ Հոռոմի եկեղեցւոյն առաքելական աթոռոյն հիմնադիր լինելուն նկատմամբ։ ԶԴիւլշէն ինձ հակառակ կարծիւո համար, Սիոն կամ զայն չէ հասկացած և կամ զիս. և այդքան թիւրիմացութիւն — կամաւոր թէ ակամայ — անհրելի է յարգելի իմբագրութեան մը՝ որ կը ճառէ միշտ յանուն «պատմական ընդհանրատուութեան», և որ իւր որամարանելու եղանակով կը ցուցնէ՝ թէ անուամբ միայն կը ճանաչէ զայն։ Անհանդուածի հակոտնութիւն մ'է «ընհանրատուութեան» հետ՝ թերի յառաջ բերել զԴիւլշէն, կոչածին իմաստն ալ թիւրբիլ, և դառնալ լսելի՝ թէ անոր «խօսքերը կը հաստատեն ինչ որ արդէն մենք ըսինք և զիտել տուինք»։ Սիոնի այս ձախորդ ճիգերը կը ծառայեն ոչ թէ զօրացնելու, այլ աւելի տկարացնելու իւր առեղծօրէնքի. և լաւ է որ այս յօդուածով ալ «կը վերջացնէ իւր լսելիքը»։

Եւ որովհետեւ գործս պատմութեան հետ է, ես չեմ մօտենար Սիոնի պոռոտ վերջաբանին ու ըննել՝ թէ Քրիստոսի Եկեղեցւոյն տրուած հին սահմանները, մի, ընդհանրական կամ կարողիկէ և առաքելական, որքան կընան պատշաճիլ, ինչպէս Սիոն կը պահանջէ, արդի քրիստոնեայ բոլոր եկեղեցեաց, որոնք անշատուած են իրարմէն ներքսապէս և արտաքսապէս, և աւելի կամ նուազ չափով հեռացած աւետարանէն, առաջին տիեզերական ժողովներէն և նախկին դարերու ընդհանրական Եկեղեցիներէն՝ վարդապետութեամբ, որբարար խորհրդոց թուով ու նշանակութեամբ, և եկեղեցական նուիրապետութեան տեսակէտով։ Ով որ քրիստոնէական խիղճ ունի, և կը կարգայ Հայոց բաժանման իսկական պատմութիւնն աշխատութեան մէջ, կարող է ինքնին խորհիլ և տեսնել՝ թէ կայ և ուր կարելի է գտնել տակաւին հին Եկեղեցւոյ ճշգրիտ նկարագիրը։

Դիւլշէնը վերջաբանը։ Սիոնի գործը «նուիրական աւանդութիւններու հետ է», որոց մէջ թէպէտ «սխալներ, նոյն իսկ առասպել

ներ կրեան սպորի, բայց աւանդութիւնը աւանդութիւն է և կը մնայ», ու պէտք է մնայ իւր սխալներով և առասպելներով հանդերձ: Հետեաբար քննադատութիւնը, աւանդութեանց այդ անողոր թշնամին, իրաւունք չունի մտենալու անոնց: Սրհնեմով լինին այն բանասէրք՝ որ չգզացին անոնց դէմ ըմբոստանալու պէտքը. և որոց տեսութիւնները սիրայօժար կը կոչէ Սիոն, աչք և ականջ միանգամայն փակելով ընդ նադատութեան հարկեցուցիչ պատճառաբանութեանց դէմ, որպէս զի չպտորեն իւր միտքը: Պէտք չկայ կարգալու և հերքելու զանոնք. անոնց հակառակ տեսութեանց — թէպէտ թոյլ կամ անարժէք — յիշատակութիւնն ինքնին հերքում է արդէն: Ի հարկին կարելի է Մասիսի հին կատարէն վար իջեցնել «նոյեան տապանն» ալ, և անոր մէջ պատասպարիլ աւանդութիւնը: Այս է Սիոնի ուղղութիւնը:

Բաներորդ դարձ, զարգացում, քննադատութիւն, բանասիրական անաչառութիւն, հայ անցելոյն ճշգրիտ ծանօթութիւն, ազգային արժանապատւութիւն եւրոպացի բանասիրութեան առջև, — ձայն կու տամ ես միւս կողմէն: Եւ հակառակաշունչ հոգի մեր ձայները կը հեռացնեն իրարմէ, և մենք զիրար չենք լսեր, չենք հասկնար: Ի՞նչ շահ ուրեմն մեր բանավիճէն, կրնայ հարցուիլ: Կայ շահ մը. եկեղեցական պատմութեան կենսական խնդրոց իսկութիւնը՝ բանասիրական հանդիսի մը ձեռքով և աւելի ընդարձակօրէն՝ առանձին հատորի մը մէջ՝ պարզել հայ զարգացած և առողջ մտքերու առջև, որոնք կարողացին և ցոյց տուին՝ թէ գիտեն մարսել ու զնահատել զանոնք: Պատմութիւնը կը վկայէ՝ թէ ամէն նոր վարդապետութիւն, նոյն իսկ ամենէն սուրբ ու փրկարարն ալ, ի սկզբան խիստ և անհաճոյ թուել է բազմութեան, և յետոյ ընտանեցիկ անոր: Համոզուած եմ՝ թէ իմ ազգայինքս ալ հետ զհետէ պիտի հաւանին ու սիրեն նոր քննադատութեան յայտնութիւնները՝ ինչպէս մեր քաղաքական նոյն պէս եկեղեցական անցելոյն վերաբերմամբ:

Միլամ

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻՍԿԻ

ՎԱՆԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ՝

(ՈՒՐԱՐՏՈՒՆ — URARTU)

—*—

Ա. ԱՅԵՐԱՆՆԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՏԵՂԱՐՈՒԹԻՒՆԸ:

Վանեան թագաւորութիւնը, որու մայրաքաղաքը Վանայ լիճին հարաւ արեւելեան եզերքը կը գտնուէր, կարեւոր դեր մը խաղաց արեւմտեան Ասիոյ քաղաքականութեան և պատմութեան մէջ Ասորեստանեան վերջին կայսրութեան շրջանին. մէկ կողմէն սանձեց դէպի հարաւ խոյացումները կէս քաղաքակիրթ հիւսիսային ցեղերուն և միւս կողմէն ժամանակի մը համար գլխաւոր կայան և հաւաքավայր եղաւ Հայաստանի և փոքր Ասիոյ ազգերուն Ասորեստանցոց հետ իրենց մարտնչմանց մէջ: Հակառակ Ասորեստանեան յաղթութեանց՝ իր անկախութիւնը բնաւ չկորցուց, և Ասորեստանցիք չկրցան տիրանալ Տաւրոսի ցանկացումով մեծադի հանգեցում, զոր մեր թուականին առաջ երկրորդ հազարամեակի ընթացքին Բաբելոնացիները չհասցրած էին:

Թագաւորութեան նախադիպ կեդրոնն էր Վանայ լիճին արեւելեան և հարաւ արեւելեան եզերքներուն վրայ, սակայն իրենց տիրապետութիւնը տարածեցին մինչեւ Աւանայ լիճը (Gökecheh) և Ալեքսանդրապոլ՝ Արաքսէն անդին դէպ ի հիւսիս, և մինչեւ արեւմտեան Եփրատի գետեզերքը. մինչ իրենց բանակները արեւելքէն մինչեւ Ռովանտուզ (Rowanduz) և մինչեւ Զապի (Zab) ակէրը հասնու: Ասիկա կը պարփակէր Հայաստանի մեծագոյն մասը, որուն Ասորեստանեան կողմի սահմանազուխի քաղաքն էր Ուէյզիք (Uaisis), այժմու Պիթլիքը, դէպի արեւելք՝ Ուրմիոյ լիճին հարաւային եզերքները՝ ուր էր Մաննա (Manna), Հին Կառապարանի Միննին (Minni) և Պարսուասի (Parsuas) երկրը: Ասոնցմէ զատ դէպ ի արեւմուտք կը տարածուէր, ըստ Թուրոյ-Տանկինի (Thureau-Dangin) Մուսասիրի (Musasir) պոփիկ նահանգը, կոչուած Արտինիս (Ardinis) «Արեւ-Աստուծոյ քաղաք» ըստ Վանեան արձանագրութեանց, եւ որ ժամանակ մը Վանայ ապաւինութիւնն էր:

1. Սոյն Թարգմանութիւն կառարուած է «The Cambridge Ancient History»-ի երրորդ հատորէն «The Assyrian Empire». որու Ը. զուգը կը կարգէ «The Kingdom of Van» էջ 169-173. Հրատ. Նիւ Իորք, The Macmillan Company, 1925. Կէ մասնակց թէ կրնայ իր շահակառութիւնը ունենալ, այնու հանգիստ որ նորութիւններ երեւան չի հաներ, և այն պատճառով կը հրատարակենք. Խ. Խմբ.